ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

11 ՓԵՏՐՎԱՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էր՝ Նարեկ Հարությունյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Հունան Ռուբենյանը

Նիստը արձանագրում էր համայնքի ղեկավարի օգնական՝ Մարոզ Սարիբեկյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2025թվականի վեցերորդ նստաշրջանի փետրվարի 11 -ի թիվ 02 հերթական նիստի օրակարգը.

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2024թվականի հունիսի 26-ի N 41-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2024թվականի դեկտեմբերի 25-N 80-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

3.Համայնքի ղեկավարի կողմից ներկայացրած «Ակունք համայնքի կոմունալ ծառայություն»համայնքային հիմնարկության ղեկավարի թեկնածուին համաձայնություն տալու և «Ակունք համայնքի կոմունալ ծառայություն»համայնքային հիմնարկության աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային

դրույքաչափերը հաստատելու մասին
4.«Հատշին քոնսթրաքթ» սպը -ի կողմից նախատեսվող «Հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի» և նոր մասնաշենքի կառուցման նպատակով իրականացվող աշխատանքների վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին
5.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Զառ բնակավայրի դպրոցի կառուցում նախատեսվող գործունեության տեղակապման նախագծի վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին
6.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Զառ և Կապուտան բնակավայրերում մանկապարտեզների կառուցման նպատակով հողամասեր տրամադրելու մասին
7.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարելու մասին
8.Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին

9.Համայնքի ավագանու հերթական նիստ հրավիրելու մասին

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 05-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-ԻՆ 41-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԵԼԼԻ ԱԲԱՋՅԱՆ)

Համաձայն«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի33-րդ և 34-րդ հոդվածների՝համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26-ի«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025-2027 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին» N 41-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1)որոշման «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն «Հավելվածի»:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 06-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 80-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԵԼԼԻ ԱԲԱՋՅԱՆ)

Համաձայն«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի33-րդ և 34-րդ հոդվածների՝

համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 25-ի«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» N80-Լ որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.
1)որոշման «Հավելվածը» շարադրել նոր խմբագրությամբ համաձայն «Հավելվածի»:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 07-Լ)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 28-րդ կետերի,«Նորմատիվ իրավական ակտերի մասին»օրենքի 37-րդ հոդվածի,հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն «Ակունք համայնքի կոմունալ ծառայություն»համայնքային հիմնարկության ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու նպատակով համայնքի ղեկավարի ներկայացրած Սահակ Հարությունյանի թեկնածությանը:

2.Հաստատել«Ակունք համայնքի կոմունալ ծառայություն» համայնքային հիմնարկության աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:
3.Ուժը կորցրած ճանաչել համայնքի ավագանու 2023թվականի սեպտեմբերի 12-

ի «Ակունք համայնքի կոմունալ ծառայություն»համայնքային հիմնարկություն հիմնադրելու,համայնքի ղեկավարի առաջարկած «Ակունք համայնքի կոմունալ ծառայություն»համայնքային հիմնարկության ղեկավարի թեկնածուին համաձայնություն տալու և «Ակունք համայնքի կոմունալ ծառայություն»համայնքային հիմնարկության կանոնադրությունը,աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին»N 59 որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետը:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 08-Ա)*

ԼՍԵՑԻՆ

«ՀԱՏՇԻՆ ՔՈՆԹՐԱՔԹ» ՍՊԸ -Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ԹԱՂԱՄԱՍԻ» ԵՎ ՆՈՐ ՄԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին»օրենքի16-րդ հոդվածի 3-րդ մասի,հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 24-ին Ակունք համայնքում կայացած հանրային քննարկումների արձանագրությունը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Նոր գյուղ բնակավայրի վարչական տարածքում Նոր գյուղ 1-ին փողոց 7 հասցեում«Հատշին քոնթրաքթս» ՍՊԸ-ի կողմից «Հասարակական նշանակության օբյեկտի վերակառուցում բնակելի թաղամասի և նոր մասնաշենքի կառուցում»նախատեսվող աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-6

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 09-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՒՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՏԵՂԱԿԱՊՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի1-ին կետի,16-րդ հոդվածի 3-րդ մասի,Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման հավելվածի28-րդ կետի,հիմք ընդունելով 2025 թվականի հունվարի 30-ին Ակունք համայնքի Զառ բնակավայրում կայացած հանրային քննարկումների արձանագրությունը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ նախնական համաձայնություն Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Զառ բնակավայրի դպրոցի կառուցում նախատեսվող գործունեության տեղակապման նախագծի վերաբերյալ:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 10-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌ ԵՎ ԿԱՊՈՒՏԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով,համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Զառ և Կապուտան բնակավայրերում մանկապարտեզների կառուցման նպատակով անհատույց(մշտական)օգտագործման իրավունքով հողամասեր տրամադրել.
1)Զառ բնակավայրի մանկապարտեզի կառուցման նպատակով 0.442հա ,հասցեն գ.Զառ Պ.Հարությունյանփողոց 18,

2) Կապուտան բնակավայրի մանկապարտեզի կառուցման նպատակով 0.3հա ,հասցեն գ. Կապուտան.....

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 11-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հինք ընդունելով գույքերի գնահատման եզրակացությունները, համայնքի ավագանին որոշում է՝

1. Ակունք համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարել աճուրդ–վաճառքի միջոցով և հաստատել մեկնարկային գներ՝ համաձայն հավելված1-2-ի:

Համայնքի ավագանու անդամներ

Կողմ-8 Դեմ-6 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 12-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՐԱՖՖԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ)

Համաձայն Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ և 22-րդ կետերի,հիմք ընդունելով հողի սեփականատերերի կողմից ներկայացված հայտերը,համայնքի ավագանին որոշում է՝

1.Փոխել հողամասերի նպատակային նշանակությունը համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ

ԼՍԵՑԻՆ

ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ)

Համաձայն«Տեղական ինքնակառավարան մասին» օրենքի 62-րդ հոդվածի,Ակունք համայնքի ավագանին որոշում է՝

1.Ակունք համայնքի ավագանու վեցերորդ՝ գարնանային նստաշրջանի հերթական նիստը հրավիրել 2025 թվականի մարտի 14-ին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 14-Ա)*

Ավագանու անդամներ

ԱՐՏՅՈՄ ԱԶԻԶՅԱՆ

ՄԱՐՋԱՆԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԼԱՐԻՍԱ ԱՐՏԱՇԵՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՎՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳՈՀԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՂԻԱԶԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱՐԱՔՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ

ԳՈՌ ՍԱՖԱՐՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵԴՐԱԿՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՀՈՒՆԱՆ ՌՈՒԲԵՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Մարոզ Սարիբեկյանը

_____